

խակ ինտելիգենտի համար: Ցանկալի է, որ հեղինակը, կամ աւելի ճիշտ ասած նրա թարգմանողը, խուսափի գրաբար ոճերից ու երկար նախադասութիւններից և այնպիսի դարձուածքներից, որոնք պահանջում են ընթերցողից ուշքի մեծ լարումն ու ճիգ: Մենք այս բարեկամական խորհուրդը կը տանք յարգելի հեղինակին, մի և նոյն ժամանակ անկեղծօրէն ու սրտանցողջունելով նրա հանրօգուտ գործի բարի սկզբնաւորութիւնը:

Պ. Բուդուղեանը ունի պատրաստութիւն ու եռանդ, ունի նաև սէր դէպի այս գործը. ցանկանում ենք, որ նա ֆնայ այդ շաւղի վրայ և տոկունութեամբ, առանց վնասելու շարունակէ:

Ի հարկէ մի մեծ բան չէ մեր ամեն մէկիս արածը, և մեր հատորիկներով անկարող ենք մի անգամից յրել այն անթափանցելի խաւարը, որ պատել է հայ ժողովուրդը. բայց մենք շնորհապարտ պիտի լինենք այն անձապ, որոնք ձգնում են իրանց ոյժերի չափով այս թանձր վարագոյրի գոնէ մի փոքր մասը բարձրացնել:

Այդպիսի անձերից մէկը բժ. Բուդուղեանն է:

Բժ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

18) **ԶԷՅԹՈՒՆՅԻ.** — Զէյթունի անցեալէն և ներկայէն. Ա. մասն. 1900 թ. Վիեննա:

Այս գրքոյկում խօսւում է գլխաւորապէս Զէյթունի անցեալի, մօտաւորապէս երկու դարի պատմութեան մասին և վերջանում 1890 թուի դէպքերով: Սակայն այդ լուրջ, քննուած, փաստերով ու վկայութիւններով մի պատմութիւն չէ, այլ հեղինակը տալիս է աւանդութիւնների և աշուղական երգերի մի հաւաքածու, որոնցից և՛ հետեցնում է, և՛ կազմում իր պատմութիւնը:

Այդ գրքոյկը իր բովանդակութեամբ ոչ միայն չէ լքցնում հայոց գրականութեան մէջ զգալի պակասը Զէյթունի պատմութեան նկատմամբ, այլ և չփոթում է այն, ինչ վերաբերում է նրա անցեալին:

Այսպէս, գրքոյկի երես 15-ում «Մուսք քրիստոնէութեան ի Զէյթուն», բոլորովին հակառակ է պատմութեան և եղելութիւններին: Առաջին դարում, երբ Քրիստոսի աշակերտները գնում էին քարոզելու Եւրոպայի և Ասիայի զանազան երկիրները, Կիլիկիայում կամ, մասնաւորելով, Զէյթունում գեռ ևս հայեր չը կային, հայկական գիւղեր գոյութիւն չունէին, որպէս զի գաւառի այս կամ այն մասը կրէր հայ անուններ, ինչ-

պէս գրում է այդ գրքոյի հեղինակը.— «Երբ Բարդուղիմէոս առաքեալ Հայաստան կ'երթար զԲրիստոս քարոզելու, կը հասնի Մարաշ ու քաղաքէն քառորդ ժամ հեռաւորութեամբ Քառասուն ակ (Գրգ Կօզ) կոչուած տեղը, որ Ագբիւրի գոլիս (Փինար պաշի) էլ է ասում...»։ Այդ դարում Կիլիկիան, այն էլ նրա դաշտային մասերը միայն, գրաւած էին հռովմայեցիների, դեռ ևս ոչ Բիզանդիայի, կողմից, մինչդեռ մինչև հայերի հաստատուելը այնտեղ՝ պարսկական, ասորական, արաբական և այլ արշաւող բանակները աւերում ու քանդում էին Կիլիկիան պարբերական կերպով։ Քիչ վարը, շարունակութիւնը մենք կարդում ենք. «Յետոյ Բարդուղիմէոս առաքեալ այս քաղաքէն հեռանալով կուգայ Զէյթունի հար. արևելեան կողմը՝ Շէհէրճիկ կոչուած տեղը... և այստեղ բնակող կռապաշտ ժողովրդեան ալ կը քարոզէ իր վարդապետութիւնը, բայց նոքա մերժելով դայն՝ սաստիկ կը բարկանան անոր դէմ...»։ Աւելի վերջ աւելացրած է ինչ որ պառակաւան ու անմիտ աւանդութիւններ, իբր թէ ժողովուրդը բորոտութեամբ կը վարակուէ, հրեշտակ կ'ուղարկուէ և վերջապէս առաքեալի աղօթած «Աւագ» լերան ստորոտը լոյս կը ափռէ, քիչ վերջ ջուր կը բղխէ, ուր, մի աւագանի մէջ, նըրանց՝ կռապաշտ հայերին՝ կը մկրտէ և այդ տեղը կը կոչուէ «Փրկիչ»... Ի՞նչ մեծ երջանկութիւն ընթերցողի համար։ Դէպքեր, անուններ և տեղեր, որոնք դարերից ի վեր պահպանել են և այժմ էլ գոյութիւն ունեն Զէյթունից քիչ հեռու... Այդ պառակաւան լեզենդանները, որոնցով հայերը այնքան հարուստ են և որոնց կարելի է լսել անհաշիւ՝ Հայաստանի ամեն անկիւններում, կարող էին հրապարակ հանուել իբրև հէքիաթներ, առասպելներ, որոնք պատմում են Զէյթունում, սակայն դրանց վրայ հիմնուած չէր կարելի եզրակացնել, թէ ովքեր էին Զէյթունի նախկին բնակիչները, կամ ինչպէս կատարուեց քրիստոնէութեան մուտքը Զէյթունում։ Երբ խօսւում է կարևոր հարցերի մասին, հարկաւոր է որ մարդկանց պատմածները լինեն լուրջ և ճիշտ ապացոյցներով։ Շէհէրճիկը նշանակուած է թիւըքաց կողմից 16, 17-րդ դարերից յետոյ, մինչդեռ հարց է, թէ դրանից առաջ ի՞նչ անուն ունէր այդ քաղաքը, կամ Երբ և ի՞նչ ազգից էր բնակուած։ Բարդուղիմէոս կամ Թադէոս առաքեալների Հայաստան կամ Կիլիկիա գնալներն էլ դեռ ևս հարց է. սակայն թէկուզ ճիշտ էլ լինէին, այդ գաւառները հայերով բնակուեցին և հայերէն անուններ ստացան առաքեալներից աւելի քան մի տասնեակ դար յետոյ, XII և XIII դարերում։

Յաջորդ երեսներում պ. Զէյթունցին շարունակում է իր առասպելները.— «Բացի ս. Փրկչէն՝ Բարդուղիմէոս առաքեալը

ս. Կարապետ անուամբ մենաստան մ'ալ չինեց Ջերմուկի հիւսարևմտեան կողմը, այժմ աւերակ, բայց Ջերմուկի հայր չի մոռանալ երբէք իւր ուխտատեղին... անոր փլատակներն ալ կը յարգէ, անոր հողն ալ կը պաշտէ... Քրիստոս ու իւր խաչը, կրօնքն ու եկեղեցին հայուն համար եղած են միշտ անձեռնմխելի սրբութիւններ, նեղութեանց մէջ իւր մխիթարութիւնը և կոխներու մէջ իւր զօրավիգը...»։ Սակայն ինչո՞ւ, մենք չենք հասկանում, պ. Զէյթունցին վեր է հանում այստեղ պատմական բացատրութիւնների հետ կրօնական այդ ալելուները, որոնք այլ ևս տաղտուկ ու ձանձրոյթ են պատճառում։ Բաւական է, որ մարդիկ սողում են խաւարի և ցեխի մէջ։ Ի լրումն այս առասպելների, նա բերում է մի ոտանաւոր աղօթք, որպէս ապացոյց «ս. Փրկիչ վանքի առաքելական հաստատութիւն մը ըլլալուն»։

Գրքոյկի երես 29-ում Զարմանուհու մասին խօսելուց յետոյ, որի թուականն ու ինչ աղբիւրից լինելն էլ գուցէ չէ յիշում ինքը պ. Զէյթունցին, շարունակում է պատմութիւնը ինչ-որ մի արուեստական հրովարտակի մասին, որ իբր թէ Զարմանուհու սերնդից Հեթում «ուսեալ և արիասիրտ քահանան» գնում է Պօլիս և ձեռք բերում Մուրադ IV-դ սուլթանից։ Նախ քան այդ չինձու հրովարտակի մասին խօսելը, մենք շատ ենք զարմանում, որ պ. Զէյթունցին ցոյց չէ տալիս, թէ ինչ աղբիւրից է իմանում, որ այդ Հեթումը Զարմանուհու սերնդից էր։ Զարմանուհու գոյութեան մասին խօսող միայն մի յիշատակարան է գտուած, գրուած 1473 թուին ոմն Կիրակոս վարդապետի կողմից, որի ամբողջութիւնը նուիրուած է Զարմանուհու գործունէութեան Կանչիի և Կապանի չրջակայքում։ Դրանից յետոյ ուրիշ ոչինչ գրուած չէ այդ կնոջ մասին և յանկարծ, մօտառաւորապէս երկու դար վերջ յիշատակուած Հեթում քահանան դառնում է նրա սերնդից։ Իսկ ինչ վերաբերում է այդ հրովարտակի թիւրքերէն գրուածքին, որի իսկականը իբր թէ այրուել է 1884 թուի հրդեհում, և որի հայերէն թարգմանութիւնն էլ դրուած է միասին, պէտք է նկատենք, որ սուլթանները այդպիսի հրովարտակներ ոչ մի ժամանակ չեն գրած։ Թիւրքական, ինչպէս նաև պարսկական, ֆէրմանները ունին մի ընդհանուր և առանձնայատուկ ոճ և նախադասութիւններ, որոնցով սկսւում են և մասնաւոր նախադասութիւններով էլ վերջանում։ Բացի դրանից, սուլթանները երբէք չեն գրում ստորագրելիս՝ «այսպէս պէտք է գիտնան և կայսերական կնքոյս վստահին. Մուրատ»։

Սկսելով Զէյթունի մղած կռիւները միայն 1780 թուից, պ.

Զէյթունցիին հաւատացած է, որ թշնամական յարաբերութիւնները թուրքաց և հայոց մէջ առաջ եկան միայն «նախանձից»։ Գուցէ նա կարծում է, որ այդ թուականից առաջ դրախտը գտնուում էր Զէյթունի մէջ։ Նա այլ ևս չէ տեսնում անցեալ դարերի աւելի արիւնալի և տխուր դրութիւնը, երբ ազգերի գոյութեան հիմունքները պահպանւում էին շատ աւելի դժուար պայմաններով և կոփւը ժողովուրդների մէջ աւելի անողորմ և աւելի վայրենի էր։

Երրորդ գլխում նա գրում է՝ «Ալի-Գայան» կոչուեց ինչ որ «Հազրէթի Ալի-փաշայի» անունով. սակայն նա պէտք էր գիտենար, որ դեռ ևս այդ թուականից շատ առաջ յիշուում է Ալա-Գայա, (ոչ Ալի-Գայա) և Ալի-Բաւ անունները։ Ալա նշանակում է բարձր և արաբական բառ է։ Օսմանցիները Արեգնին անուանեցին Ալա-Բաշ, որ նշանակում է բարձր գլուխ, իր աշխարհագրական բարձր դիրքի շնորհով, իսկ նրա սահմաններում գտնուած հսկայ ժայռին առանձին Ալա-Գայա, որ նշանակում է բարձր սար։

Երեաներ 95—98-ում Թէշերլի աշիրէթի (թուրքմէն մի ցեղ) մասին խօսելիս, յայտնում է, որ 50-ական թուականներին, մինչև 59 թիւը, Զէյթունցիները կուռի մէջ էին դրանց հետ և այդ միևնոյն դարին ինչ-որ մի վարդապետ ու մի քահանայ գնում են Պօլիս և խնդրագիր տալիս, որի համաձայն սուլթան Մէլիտը հրամայում է Թէշերցիներին մշտապէս բնակեցնել Չուգուր-Օվայում (Կիլիկիայի գաշապին մասը, հարաւում) և արգելիկ նրանց սովորական լեռնագնացութիւնը Զէյթունի սահմաններում։ Դէպքը բոլորովին հակառակն է կատարուած։ Այդ թուականներում Զէյթունն արդէն սոսկալի տագնապների մէջ էր իսլաւոստ փաշայի բանակի հանդէպ, որ ուղարկուած էր հէնց կենտրոնական կառավարութեան կողմից, ուրեմն և չէր կարելի սպասել, որ Սուլթան Մէլիտը Զէյթունի նպաստաւոր մէկ այդպիսի կարգադրութիւն անէր, ինչպէս այդ գրում է պ. Զէյթունցին։ Նա բոլորովին սխալում է։ 59 թուից առաջ արդէն Թէշերցիներն ու թուրքմէնները չարաչար յաղթուած՝ տեղի էին տալիս և նրանց բնակուած գաւառները յանձնում Կովկասից գաղթող չէրքէզիներին ու նօղայի թաթարներին։

Գօչանների մասին խօսելիս ինչ-որ աւանդութեան վրայ հիմնուած, պ. Զէյթունցին ընկնում է նմանապէս պատմական մի այնպիսի սխալի մէջ, որ չը տեսնել կարելի չէ։ Նա գրում է. — «Այնթապու մէջ գտնուող մաղագործ գնչուներէն, որոնք խրգան (չինկեանէ, աղքատ) կը կոչուէին, երկու եղբարք՝ Քրիստոսի 1640 թուականին՝ կուգան Հաճին։ Ասոնք իրանց

արհեստը ժամանակ մը գործածելէ յետոյ՝ յանկարծ բաղդերնին կը բացուի։ Հաճընցի հայերը այդ ժամանակ սաստիկ երկպառակտած էին... և չարեաց դարման տանելու համար կը խորհին այս նորեկ գնչուներն իրանց պետ ճանչնալ... Այդ ժամանակն է, որ իրանց խրգան անունը Գօջան-օղլուի կը փոխին»։ Ո՞ր տեղից է դուրս եկել 1640 թուականը և Գօջանները, զբանով ծաղրուում և շփոթւում են պատմութիւնն ու անցեալի դէպքերը։ Գօջանները ոչ գնչու են և ոչ էլ մաղագործ, այլ թիւրքմէն մի յալանի ցեղ, որոնք XIII-րդ դարում Քօջան անուն նահապետի առաջնորդութեամբ Արեւելեան-Թիւրքաստանի Իւզ-Օֆ նահանգից Փոքր-Ասիա անցան Եփրատի հովիտով։ Հէնց սրա անհետով իր ցեղը ստացաւ Քօջան կամ Գօջան օղլի անունը։ Դրա ցեղակիցներից մէկի՝ Նիւրէի որդին էր Րամազանը, որի անունով էլ միւս ցեղը կոչուեց Րամազան-օղլի։ Սրանք, դեռ եւս տկար, հայոց (Ռուբինեան) թագաւորներից խնդրեցին և ստացան արտօնութիւն՝ արածացնելու իրանց հօտերը Տարոս լեռան ստորոտին։ Քիչ վերջ, օգտուելով հպերի քաղաքական ընկած վիճակից, իրանց ցեղով հաստատուեցին այնտեղ, ուր բազմա-նալով նրանց յաջորդները տիրեցին Ադանան ու չրջակաները և կազմեցին անկախ ու զօրաւոր իշխանութիւն։ Դրանց վերջին մնացորդ մի քանի դէպքէկները, 19-րդ դարու սկզբում, իրանց մէջ բաժանած իշխում էին Կիլիկիայի զանազան դաւառ-ները։ Այս բոլորը հաղորդում է պատմութիւնը, իսկ հայերէն կարելի է կարդալ հ. Ալիշանի Սիսուանում բաւական մանրա-մասն գրուած։

Կան նաև պատմական սխալներ մի քանի կարևոր դէպքե-րի, ինչպէս Չափան-օղլու, ներքին կռիւների, Այլէ-Դաղի և այլն, սակայն շատ երկար կը լինէր կանգ առնել ամեն մէկի առաջ։ Միայն, նախ քան վերջացնելը յօդուածը, մենք աւելա-ցնում ենք նաև այն, որ գրեթէ բոլոր դէպքերը հիմնուած լինե-լով աշուղական երգերի կամ աւանդութիւնների վրայ, ա-ռաջացել են ընդհանուր խառնաշփոթութիւններ։ Իւրաքան-չիւր իշխանական տուն ունէր, ինչպէս նաև այժմ, իր ա-ռանձին աշուղը, որ գրում էր, երգում էր տարբեր մեկ-նութիւններով ու ոգով և շատ անգամ հակասական, երբ այս և այն թաղերը միմեանց թշնամի էին. այնպէս որ չէր կա-րելի պատմութիւնը կազմել դրանց վրայ հիմնուած, առանց ըն-դարձակ ուսումնասիրութեան։ Յիշատակուած դէպքերից մի քա-նիսն էլ հաւաքական գործեր չեն, այլ այս կամ այն թաղի կամ խմբի ինքնուրոյն ձեռնարկներ, որոնց հարկաւոր չէր մասնաւոր ուշադրութիւն դարձնել։